ՈԱԱԿ
ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2011

Երևան, 2012

Բովանդակություն

I. Ընդհանուր զարգացումներ 2

II. «Որակի արտաքին ապահովման քաղաքականություն և ընթացակարգեր» ծրագիր 4

III. «Ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրում» ծրագիր 6

IV. «Միջազգային համագործակցություն» ծրագիր 8

V. «ՈԱԱԿ-ի որակի ներքին ապահովման քաղաքականություն և ընթացակարգեր» ծրագիր 10

VI. «Մասնագիտական ուսումնական հաստատությունների որակի ներքին ապահովում և շահակիցների հետ փոխհարաբերություններ» ծրագիր 12

VII. ՈՒսանողության ձայն 13

I. Ընդհանուր զարգացումներ

2011 թվականին ՈԱԱԿ-ը շարունակեց ընթացիկ նախագծերի իրականացումը և նախաձեռնեց մի շարք նոր նախագծեր: Հիմնականում աշխատանքները ծավալվել են հետևյալ ուղղություններով.

- ՈԱԱԿ-ը ամփոփեց 2010 թվականին հինգ բուհերում սեփական ուժերով իրականացրած փորձնական ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացները և սկսեց փորձնական ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացներ երեք միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում:
- ՀԲ-ի երկրորդ վարկային ծրագրի շրջանակներում ՈԱԱԿ-ը նախաձեռնեց միջազգային փորձագետների մասնակցությամբ երկու փորձնական ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացներ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական և Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարաններում: Կարևոր է նշել, որ ՈԱԱԿ-ը, համակարգելով Տեմպուսի շրջանակներում իրականացվող PICQA և DIUS ծրագրերը՝ ապահովեց հայտնի միջազգային փորձագետների մասնակցությունը հավատարմագրման գործընթացներին որպես դիտորդ: Այցերի ավարտին փորձագետները տրամադրեցին իրենց եզրակացությունները՝ տալով գնահատական ՈԱԱԿ-ի ծավալած հավատարմագրման գործընթացներին: Ըստ միջազգային փորձագետների, ՈԱԱԿ-ի կողմից մշակված փաստաթղթերը և ծավալած աշխատանքները համահունչ են Որակի ապահովման եվրոպական չափանիշներին ու ուղենիշներին և կնպաստեն ՈԱԱԿ-ի ճանաչմանը համապատասխան եվրոպական կառույցների կողմից:
- Իր առաքելությունն իրականացնելու և գործունեության որակն ապահովելու նպատակով ՈԱԱԿ-ը կազմակերպել է իր անձնակազմի և փորձագետների վերապատրաստումներ: Այսպիսով, ՈԱԱԿ-ի աշխատակիցները վերապատրաստվել են եվրոպական մի շարք երկրներում՝ Ֆրանսիայում, Գերմանիայում, ինչպես նաև ՀՀ-ում: ՈԱԱԿ-ը վերապատրաստումներին մասնակից է դարձրել նաև բուհական համակարգի փորձագետներին:
- Հավատարմագրման մասին անկողմնակալ և թափանցիկ որոշումներ կայացնելու նպատակով, ՈԱԱԿ-ը մշակել է «Հավատարմագրման հանձնաժողովի ձևավորման և գործունեության ընթացակարգի» նախագիծը, որը ներկայացվեց ՈԱԱԿ-ի հոգաբարձուների խորհրդի քննարկմանը:
- Ակտիվ աշխատանքներ են ծավալվել ՄՈՒՀ-երի որակի ապահովման և վարչական անձնակազմի վերապատրաստման ուղղությամբ: Այս նպատակով տարբեր բուհերում տարբեր մակարդակի կառավարող և իրականացնող օղակների հետ կազմակերպվել են բազմաթիվ քննարկումներ, կլոր սեղաններ,

խորհրդատվություններ և աշխատաժողովներ։ Կարևոր է նշել նաև 2011թ. դեկտեմբեր ամսին ՈԱԱԿ-ի կազմակերպած ֆորումը, որի ընթացքում մասնակիցներն անցան երկօրյա վերապատրաստման դասընթաց «Որակի ապահովման ներքին համակարգի ներդրում» թեմայով: Բուհերը ձեռնամուխ եղան ինքնավերլուծության աշխատանքների պլանավորմանը և որակի ներքին ապահովման արդյունավետ համակարգի ներդրմանը։

- Որակի ապահովման գործընթացում շահակիցների լայն մասնակցությունն ապահովելու համար, ՈԱԱԿ-ը ստեղծել և ուղղորդել է «Ուսանողության ձայն» ցանց, որի նպատակն է ուսանողներից ստանալ անկողմնակալ տեղեկատվություն, ինչպես նաև ուսանողների շրջանում տարածել տեղեկատվություն բարեփոխումների, մասնավորապես, ուսանողակենտրոն ուսուցման տարրերի մասին։

Ստորև մանրամասն ներկայացվում են հինգ ծրագրերի շրջանակներում ՈԱԱԿ-ի և «Ուսանողության ձայն»-ի կատարած աշխատանքները։

II. «Որակի արտաքին ապահովման քաղաքականություն և ընթացակարգեր» ծրագիր

Ծրագրի նպատակն է ստեղծել որակի արտաքին ապահովման համակարգ: Հայաստանում մասնագիտական կրթության որակի ապահովման գործընթացներն ամրապնդելու համար մշակել որակի արտաքին ապահովման գործընթացների ուղեցույցներ, քաղաքականություն, ընթացակարգեր, չափանիշներ և չափորոշիչներ, ինչպես նաև հետադարձ կապի մեխանիզմներ: Այսպիսով.

- Շարունակվել է կրթության որակի գնահատման, մասնագիտական փորձաքննության և հավատարմագրման գործընթացների միջազգային առաջավոր փորձի ուսումնասիրությունը և վերլուծությունը:
- ՀՀ ԿԳ նախարարության հետ համատեղ մշակվել են «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման կարգը», կարգում փոփոխություններ և լրացումներ կատարելու ՀՀ Կառավարության որոշման նախագիծը, «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները» և հաստատվել են ՀՀ Կառավարության կողմից:
- Ինչպես հավատարմագրման կարգը, այնպես էլ հավատարմագրման չափանիշները և չափորոշիչները միջազգային փորձագետների կողմից ենթարկվել են վերլուծության և արժանացել նրանց հավանությանը, քանի որ, ըստ փորձագետների, դրանք համահունչ են Որակի ապահովման եվրոպական չափորոշիչներին և ուղենիշներին:
- Մշակվել և ՈԱԱԿ-ի հոգաբարձուների խորհրդի կողմից հաստատվել են հավատարմագրման կարգի մաս հանդիսացող «Փորձաքննության անցկացման ձեռնարկը», «Ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրման ինքնավերլուծության ձևաչափերը», «Փորձագիտական խմբերի ձևավորման կարգը», ՈԱԱԿ-ի ֆինանսական քաղաքականությունը հավատարմագրման ոլորտում, հավատարմագրման գործընթացի սակագները: Շահակիցների աշխատանքներին աջակցելու նպատակով հրատարակվել և նրանց է տրամադրվել «Փորձաքննության անցկացման ձեռնարկը» և «Մասնագիտական ուսումնական հաստատությունների որակի ներքին ապահովման համակարգի ձևավորման ուղեցույցը»:
- ՈԱԱԿ-ի աշխատակիցներն իրականացրել են ՀԲ-ի երկրորդ վարկային ծրագրի շրջանակներում՝ ԿԳ նախարարության դրամաշնորհի սահմաններում, բարձրագույն ուսումնական հաստատությունների կողմից ներկայացված որակի ներքին ապահովման համակարգերի դրամաշնորհային առաջարկների գնահատում: Հիմք ընդունելով ՈԱԱԿ-ի կառուցողական արձագանքը, ՄՈՒՀ-երը մի քանի անգամ վերանայել են

իրենց առաջակները, ինչը և նպաստել է ՄՈՒՀ-երի որակի ապահովման և դրամաշնորհային առաջարկը պատրաստող վարչական անձնակազմի կարողությունների զարգացմանը:

- Սկսվել են ՀՀ մասնգիտական կրթության համակարգի վերլուծության աշխատանքները: Այսպիսի աշխատանքներ ՈԱԱԿ-ը, ըստ եվրոպական չափորոշիչների, պետք է իրականացնի երեք տարին մեկ անգամ: Ուստի, այս վերլուծությունը հանդիսանում է ՈԱԱԿ-ի առաջին համակարգային վերլուծությունը:

Բոլոր փաստաթղթերը, միաժամանակ, պատրաստվել են նաև անգլերեն տարբերակով՝ միջազգային փորձագետներին ներկայացնելու, ինչպես նաև ՈԱԱԿ-ի աշխատանքների միջազգայնացմանը նպաստելու նպատակով:

III. «Ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրում» ծրագիր

Ծրագրի հիմնական նպատակն է. կազմակերպել և իրականացնել ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրում, հետևելով միջազգային փորձին, նպաստել ՈԱԱԿ-ի շահակիցների կարողությունների զարգացմանը՝ որակի ապահովման գործընթացներ և շարունակական բարելավումներ իրականացնելու համար, մշտադիտարկել որակի ապահովման համակարգերի ստեղծումը ուսումնական հաստատություններում, փորձարկել հավատարմագրման չափանիշներն ու չափորոշիչները, ինչպես նաև ՈԱԱԿ-ի գործընթացները:

Հարկ է նշել, որ ՀՀ-ում ՄՈՒՀ-երի որակի ներքին ապահովման համակարգերի ստեղծումը դեռ սաղմնային վիճակում է: Ուստի, ՈԱԱԿ-ը իր աշխատանքների արդյունավետությանը նպաստելու նպատակով մշակել և իրականացրել է ՄՈՒՀ-երի որակի ապահովման աշխատողների կարողությունների զարգացմանն ուղղված մի շարք միջոցառումներ: Ավելին, հաշվի առնելով փորձարկումների արդյունքում բացահայտված ուսումնական հաստատությունների ներկայիս իրավիճակը և հավատարմագրման չափանիշների խիստ պահանջները, ըստ ՄՈՒՀ-երի, նախնընտրելի էր սահմանել անցումային ժամանակաշրջան՝ որակի ապահովման ներքին համակարգերը ներդնելու և հավատարմագրման գործընթացներում լիարժեք ներգրավվելու համար:

Մասնավորապես, ծրագրի շրջանակներում աշխատանքներն իրականացվել են հետևյալ հիմնական ուղղություններով.

1. ՈԱԱԿ-ի գործընթացների փաստաթղթային և տեղեկատվական ապահովում

- Մշակվել է ՈԱԱԿ-ի էլեկտրոնային հարցաշարի 3-րդ մասի բովանդակությունը «Ուսումնական հաստատության գիտահետազոտական գործունեության վերաբերյալ տեղեկատվություն» ստանալու համար:
- Համակարգային առումով լրամշակվել և բարելավվել է ՈԱԱԿ-ի էլեկտրոնային հարցաշարը, աշխատանքներ են տարվել հարցաշարի կայքէջի կանոնակարգի նախագծի մշակման ուղղությամբ:
- Մշակվել է ՈԱԱԿ-ի փորձագետների հավաքագրման էլեկտրոնային հարցաշար-բազան:
- Կազմվել է փորձաքննության ընթացքում փորձագետների ուսումնասիրությունների համար անհրաժեշտ նորմատիվ-իրավական փաստաթղթերի փաթեթը:
- Մշակվել, քննարկվել և փորձարկվել է փորձագետների կողմից ՈԱԱԿ-ին ներկայացվող հաշվետվության ձևաչափը:
- Կազմվել է հավատարմագրման գործընթացի իրականացման համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը և մշակվել են ձևաթղթերը (ծանուցագրեր, դիմում-հայտեր և այլն):
- Լրամշակվել են փորձագետների ընտրության, փորձագիտական խմբերի ձևավորման կարգերը, հավատարմագրման հանձնաժողովի ձևավորման և գործունեության ընթացակարգը:
- Լրամշակվել են ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծության ձևաչափը, հավատարմագրման կարգը, փորձաքննության ձեռնարկը:

2. Խորհրդատվության տրամադրում և օգնություն շահակիցներին

- Օժանդակություն է տրամադրվել ՄՈՒՀ-երին՝ ուղղված ՈԱԱԿ-ի էլեկտրոնային հարցաշարի լրացմանը:
- Փորձարկման մասնակից բուհերի ներկայացուցիչների հետ պարբերաբար հանդիպումներ են կազմակերպվել ինքնավերլուծության ձևաչափի քննարկման և ինքնավերլուծության իրականացման ուղղորդման նպատակով:
- Պարբերաբար կազմակերպվել են հանդիպումներ փորձագետների հետ բուհերի իրականացրած ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծության ուսումնասիրության նպատակով:
- ՀԲ-ի դրամաշնորհային ծրագրի շրջանակներում գնահատվել են բուհերի ներկայացրած հայտերը՝ որակի ապահովման ներքին համակարգի ներդրման համար:

- DIUS ծրագրի շրջանակներում կատարվել է մասնակից բուհերի ներկայացրած որակի ներքին ապահովման մեխանիզմների քարտեզավորման (mapping) ուսումնասիրություն և տրամադրվել է խորհրդատվություն:

3. Կազմակերպական գործունեություն

- Կատարվել են փորձագետների ընտրություն ՄՈՒՀ-երում իրականացվող ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացների փորձարկման համար:
- ՈԱԱԿ-ի կողմից մշակված ինքնավերլուծության ձևաչափերը փորձարկվել են ԵՊՀ-ի Իջևանի մասնաճյուղում, Մխիթար Գոշ հայ-ռուսական միջազգային համալսարանում, Երևանի ճարտարապետության և շինարարության պետական, Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարաններում:
- ՀԲ-ի դրամաշնորհի շրջանակներում, միջազգային փորձագետների մասնակցությամբ, իրականացվել են փորձնական ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացներ Երևանի ճարտարապետության և շինարարության պետական և Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարաններում:
- Երևանի ճարտարապետության և շինարարության պետական և Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարաններում իրականացվել են փորձնական ծրագրային հավատարմագրման գործընթացներ:
- Սկսվել են ինստիտուցիոնալ հավատարմագրման փորձարկումներ Երևանի տարածաշրջանային N1, N2 և Երևանի <<Էրեբունի>> բժշկական պետական քոլեջներում: Նշված միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում իրականացվող փորձնական ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացների շրջանակներում կազմակերպվել են ինքնավերլուծություն իրականացնող աշխատանքային խմբերի անդամների վերապատրաստումներ և խորհրդատվություններ:

IV. «Միջազգային համագործակցություն» ծրագիր

Այս ծրագրով ՈԱԱԿ-ի գործունեությունը նպատակաուղղված է Հայաստանի մասնագիտական կրթության ոլորտի միջազգայնացմանը նպաստող նախապայմանների

ստեղծմանը. համագործակցել որակի ապահովման միջազգային այլ կենտրոնների հետ, նպաստել որակի ապահովման հայաստանյան գործընթացների ճանաչմանը, հետևել ոլորտի միջազգային զարգացումներին և ձգտել անդամագրվել հավատարմագրմամբ զբաղվող միջազգային առաջատար ցանցերին: 2011 թվականին ՈԱԱԿ-ի գործողությունները գնահատվեցին INQAAHE-ի կողմից և ՈԱԱԿ-ը դարձավ վերջինիս լիիրավ անդամը: Ավելին, ՈԱԱԿ-ը ներկայացվեց INQAAHE-ի Կառավարման խորհրդում և համակարգում է դրա «Հետազոտություն և հրապարակումներ» հանձնաժողովը: Սույն ծրագրի շրջանակներում, հատկապես, անհրաժեշտ է հիշատակել հետևյալ աշխատանքները.

- TEMPUS ծրագրի շրջանակներում ՈԱԱԿ-ի աշխատակիցները փետրվարի 11-18-ը, ապրիլի 9-13-ը և հոկտեմբերի 11-13-ը Գերմանիայի Դաշնային Հանրապետության Կոբլենց քաղաքում մասնակցել են «Համակարգային մոտեցում բարձրագույն կրթության որակի կառավարմանը» թեմայով աշխատաժողովներին:
- Նիդեռլանդների և Ֆլանդրիայի հավատարմագրման կազմակերպության (NVAO) հրավերով ՈԱԱԿ-ը մարտի 3-6-ը մասնակցել է «Որակի ապահովման եվրոպական ռեգիստրի» կոնֆերանսին:
- Մարտի 9-11-ը ՈԱԱԿ-ի աշխատակիցները ԹՎԻՆԻՆԳ ծրագրի շրջանակներում մասնակցել են Վրաստանում կազմակերպված “Capacity Enhancement for Implementing Bologna Action Lines in Georgia” (CEIBAL) կոնֆերանսին:
- Ապրիլի 3-6-ը Մադրիդում INQAAHE-ի ֆորումին ՈԱԱԿ-ը ներկայացավ ելույթով: ***Այս համաժողովի ընթացքում ՈԱԱԿ-ը դարձել է Որակի ապահովման գործակալությունների միջազգային ցանցի կառավարման խորհրդի անդամ:***
- PICQA ծրագրի շրջանակներում.
    - իրականացվել են այցեր ծրագրում ներգրավված հաստատություններ՝ ՀՊՃՀ, ԵՊԲՀ, ՀՊՃՀ-ի Վանաձորի մասնաճյուղ և ԳՊՄԻ: Այցի նպատակն էր ՈԱԱԿ-ի բացատրությունների և քննարկումների արդյունքում համաձայնության գալ այնպիսի գաղափարների շուրջ, ինչպիսին են «որակ» և «որակի ապահովում», ինչպես նաև քննարկել ՄՈՒՀ-երի ակնկալիքները որակի ապահովումից:
    - Որակի ներքին ապահովման համակարգերի ներդրման նպատակով ապրիլի 14-15-ը Երևանում կազմակերպվել է գործընկեր հաստատությունների և կազմակերպությունների երկօրյա հանդիպում:
- Սեպտեմբերի 17-ին DIUS ծրագրի շրջանակներում ՈԱԱԿ-ը կազմակերպել է բոլոր գործընկերների մասնակցությամբ աշխատաժողով ԵՊՀ-ում: Մշակվել, հրատարակվել և գործընկերներին է ներկայացվել որակի ապահովման գործընթացների քարտեզագրման մեթոդաբանությունը նկարագրող բրոշյուրը:

- Հոկտեմբերի 18-21-ը «Ինժեներական, ճարտարապետության, ինֆորմատիկայի, բնական գիտությունների և մաթեմատիկայի բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի հավատարմագրման կենտրոնի» (ASSIN), «Նիդեռլանդների համալսարանների որակի ապահովման կենտրոնի» (QANU) և «Մանկավարժական հետազոտությունների միջազգային կենտրոնի» (CIEP) ներկայացուցիչների կողմից գնահատվել են ՈԱԱԿ-ի կողմից մշակված փաստաթղթերը «Որակի ապահովման եվրոպական չափանիշներին և ուղենիշներին» դրանց համապատասխանությունը ստուգելու նպատակով: Ընդհանուր առմամբ, եվրոպական փորձագետները հավանության են արժանացրել ՈԱԱԿ-ի իրականացրած աշխատանքները և մշակումները՝ հիմնավորելով, որ վերջիներս համահունչ են եվրոպական չափորոշիչներին և ուղենիշներին:
- ՈԱԱԿ-ը նոյեմբերի 30-ից մինչև դեկտեմբերի 3-ը մասնակցություն է ունեցել Բրյուսելում կայացած <<Միջազգայնացում և որակի ապահովում>> INQAAHE-ի և ENQA-ի կազմակերպած աշխատաժողովին:
- Դեկտեմբերի 5-ից 7-ը ՈԱԱԿ-ը հրավիրված էր մասնակցելու Աստանայում կազմակերպված “Establishing QA Systems in Central Asia and Eastern Europe” աշխատաժողովին: Աշխատաժողովի արդյունքում դեկտեմբերի 20-ին ՈԱԱԿ-ը ENQA-GIQAC-UNESCO ծրագրի շրջանակներում դիմել է Որակի ապահովման եվրոպական ցանցին որակի արտաքին ապահովման համակարգի և ՈԱԱԿ-ի հետագա ճանաչման վերաբերյալ խորհրդատվություն տրամադրելու համար, նշված դիմումը ընդունվել է և ENQA-ի փորձագետի այցը նախատեսվում է 2012 թվականի մայիս ամսին:
- ՈԱԱԿ-ի կողմից ներկայացվել են հինգ դրամաշնորհային ծրագրեր՝ MAHATMA, ARARAT, CUPEL, TRIBUTE, EARL, որոնք արժանացել են բարձր գնահատականի և առաջարկվել է վերանայումից հետո կրկին ներկայացնել:

V. «ՈԱԱԿ-ի որակի ներքին ապահովման քաղաքականություն և ընթացակարգեր» ծրագիր

Ծրագրի նպատակն է ՈԱԱԿ-ում ներդնել որակի ապահովման ներքին համակարգ, որի միջոցով մշտադիտարկվում և գնահատվում է ՈԱԱԿ-ի գործունեության

պլանավորումն ու իրականացումը, փաստաթղթերի շրջանառությունը և ռեսուրսների օգտագործումը: Ծրագրի շրջանակներում իրականացվել են հետևյալ հիմնական աշխատանքները.

- ՈՒսումնասիրվել են ՈԱԱԿ–ի փաստաթղթաշրջանառության մշակման և իրականացման խնդիրները, մշակվել է փաստաթղթերի մշակման ընթացակարգի բովանդակային կառուցվածքը:
- Եվրոպական կառույցների (ASSIN, QANU, CIEP) կողմից գնահատվել են ՈԱԱԿ-ի մշակած փաստաթղթերի համապատասխանությունը «Որակի ապահովման եվրոպական չափանիշներին և ուղենիշներին»:
- Որակի ապահովման մեխանիզմների մշակման նպատակով քարտեզավորվել են (mapping) «Ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրման» գործընթացների փուլերը:
- Ստեղծվել են հնարավորություններ ՈԱԱԿ-ի աշխատակազմի մասնագիտական զարգացման, ինչպես նաև փորձագետների վերապատրաստման համար.
    - հունիսի 26-ից հուլիսի 11-ը ՈԱԱԿ-ի աշխատակիցները մասնակցել են Գերմանիայի Դաշնային Հանրապետության Կոբլենց քաղաքում կայացած ամառային դպրոցին.
- TEMPUS ծրագրի շրջանակներում ՈԱԱԿ-ի աշխատակիցները փետրվարի 11-18-ը ԳԴՀ-ի Կոբլենց քաղաքում մասնակցել են ՄՈՒՀ-ի որակի ներքին ապահովմանը և ինքնավերլուծության պատրաստմանը նպաստող նվիրված աշխատաժողովի.
- Հունիսի 3-10-ը Ֆրանսիայի Հանրապետության Փարիզ և Լեման քաղաքներում ՈԱԱԿ-ի աշխատակիցները մասնակցել են «Բարձրագույն կրթության որակի ապահովում և համադրելիության խթանում» աշխատաժողովին,
    - հոկտեմբերի 19-ից նոյեմբերի 3-ը ընկած ժամանակահատվածում ՈԱԱԿ-ի մեկ աշխատակից, Որակի ապահովման միջազգային ցանցի աջակցությամբ, ՈԱԱԿ-ի ներկայացուցիչը վերապատրաստում է անցել Թայվանի բարձրագույն կրթության գնահատման և հավատարմագրման խորհրդում:
- ՈԱԱԿ-ի կողմից իրականացվող գործընթացների, փորձագիտական աշխատանքների գնահատման և հակադարձ կապի մեխանիզմների կիրառման արդյունավետությունն ուսումնասիրելու նպատակով կազմակերպվել է հարցաշարերի լրացում փորձարկումներին մասնակցող հաստատությունների կողմից, կատարվել է արդյունքների վերլուծություն.
- Խոր վերլուծական և պրակտիկ աշխատանքներ են ծավալվել հավատարմագրման գործընթացի որակյալ կազմակերպման ուղղությամբ.

- Կայացման փուլում է ՈԱԱԿ-ի համակարգողի ինստիտուտը;
- Հավատարմագրման գործընթացում փորձագետների մասնակցությունը կարգավորող ձևաչափերի հստակեցում;
- Հաշվետվությունների արդյունավետությունը և համասեռությունն ապահովելու նպատակով լրամշակվել է գործընթացի հաշվետվողականության բաղադրիչը:

- ՀՀ-ում մասնագիտական կրթական համակարգի համակողմանի վերլուծություն իրականացնելու նպատակով կազմակերպվել են հարցումներ հանրապետության մասնագիտական ուսումնական հաստատությունների շրջանում:
- Վերանայվել և լրամշակվել են ՈԱԱԿ-ի որակի ներքին ապահովման համակարգի մի շարք գործիքներ.
  - Թարմացվել է ՈԱԱԿ-ի կառավարման տեղեկատվական համակարգը;
  - Մշակվել և ներդրվել է հաշվետվության համակարգը ՈԱԱԿ-ի կառուցվածքային բոլոր մակարդակների համար;
  - ՈԱԱԿ-ի գործունեության մասին ներքին և արտաքին տեղեկատվության թափանցիկության ապահովման նպատակով մշակվել է կայքի տեղեկատվության թարմացման կարգը;
  - Մշակվել են ՈԱԱԿ-ի ներքին կարգապահական կանոնները՝ներառյալ աշխատակազմի համալրման և ազատման, խրախուսման և տույժի ընթացակարգերը:

VI. «Մասնագիտական ուսումնական հաստատությունների որակի ներքին ապահովում և շահակիցների հետ փոխհարաբերություններ» ծրագիր

Ծրագրի նպատակն է հաստատել սերտ փոխհարաբերություններ ներքին և արտաքին շահակիցների հետ և ուղղորդել նրանց որակի ներքին ապահովման համակարգերի ու մեխանիզմների ստեղծման, իրականացման և հետագա զարգացման գործընթացներում: ՈՒսումնական հաստատություններում որակի մշակույթի ձևավորմանն աջակցելու համար ՈԱԱԿ-ն իրականացրել է հետևյալ աշխատանքները.

- ներքին որակի ապահովման համակարգերի կառուցվածքային/ կազմակերպական և մշակութային/հոգեբանական տարրերի վերհանման և բազմաչափ վերլուծության նպատակով իրականացվել է «Որակի ապահովման համակարգը ՀՀ մասնագիտական ուսումնական հաստատություններում» թեմայով հետազոտություն;

- ուսումնասիրվել են ՄՈՒՀ-երի կարիքները վերապատրաստման բնագավառում և ձևակերպվել են համապատասխան թեմաներ, որոնք հիմք են հանդիսացել վերապատրաստման ծրագրերի մշակման համար;
- հաստատությունների որակի պատասխանատուների, դասավանդող և վարչական անձնակազմերի, ինչպես նաև ՈԱԱԿ-ի փորձագետների համար մշակվել և փորձարկվել են մի շարք վերապատրաստման փաթեթներ.
    - Մասնագիտական ուսումնական հաստատությունների որակի ներքին ապահովման քաղաքականությունը, տեսլականը և առաքելությունը;
    - Որակ, որակի մշակույթ;
    - ՄՈՒՀ-ի որակի ներքին ապահովման համակարգը;
    - ՄՈՒՀ-ի որակի ներքին ապահովման կառույցը;
    - Ինքնավերլուծություն, մեթոդաբանություն և գործիքներ;
    - Ֆոկուս խմբային քննարկման կիրառումը ներքին և արտաքին փորձաքննության ընթացքում;
    - Հարցադրման տեխնիկա;
- կազմակերպվել են հանդիպումներ հաստատությունների ներկայացուցիչների և ՈԱԱԿ-ի փորձագետների հետ նրանց խորհրդատվություն և օժանդակություն տրամադրելու համար;
- հայտերի և փաստաթղթերի ուսումնասիրության հիման վրա ստեղծվել է փորձագետների բազա;
- ՈԱԱԿ-ի փորձագետների բազան համալրելու նպատակով փորձագետների համար կազմակերպվել է «Կրթության որակի գնահատում» առաջին սեմինարը, որին մասնակցել են շուրջ 100 մասնագետներ;
- ՀՀ ԿԳ նախարարության հետ համատեղ Աղվերանում կազմակերպվել է «Որակի ներքին ապահովումը ՀՀ մասնագիտական կրթության ոլորտում. մարտահրավերներ և հեռանկարներ» թեմայով առաջին ֆորումը, որի շրջանակներում մասնագիտական ուսումնական հաստատությունների միջև կազմակերպվել է լավագույն փորձի փոխանակում:

VII. ՈՒսանողության ձայն

ՈԱԱԿ-ի շահակիցների լայն շրջանակի՝ ուսանողության հետ փոխհարաբերությունների զարգացման նպատակով ստեղծվել է «Ուսանողության

ձայն» աշխատանքային խումբը, որը ՀՀ-ում արդեն ձևավորել է ուսանողներից բաղկացած ցանց։ Ցանցի նպատակն է ուսանողներից ձեռք բերել հուսալի տեղեկատվություն համակարգի գործունեության վերաբերյալ, ինչպես նաև ուսանողների շրջանում տարածել բարեփոխումների մասին գաղափարները, հատկապես ուսանողակենտրոն մոտեցման տարրերը։ Ընդհանուր առմամբ, այս մոտեցման գաղափարն է՝ ուսանողին դարձնել կրթական գործընթացների ակտիվ մասնակից։ Այսպիսով.

- Ցանցի միջոցով ուսանողների շրջանում իրականացվել է հետազոտություն «Ուսանողակենտրոն կրթության առանձնահատկությունները Երևանի, Գյումրիի և Վանաձորի բարձրագույն ուսումնական հաստատություններում. դասավանդում, ուսումնառություն և կրեդիտային համակարգի վերաբերյալ ուսանողների կարծիքի ուսումնասիրություն» թեմայով;
- Խումբն ունի իր էջը Facebook–ում, համացանցային սեփական կայքը (www.sv.am) և բլոգը։